

բայց թիւն

ԿԵՐԱՊԵՏ ԵՊԻՍԿՈՊՈՒՄ

ՀՐԱԺԱՐԱԿԱՆՆԵՐ ԵՒ

ՄԱՏԹ. ՎԱՐԴԱՊԵՏԸ

ԲԱՅԼԻ

ԽՈՀԻԴԱՆ

ԳՐԱՎ 5 ԿԱՊ.

ԹԻՖԼԻՍ  
Ճպարան «ՀԵՐՄԵՆ» Գրաֆսկայիս տուն. 6  
1911

31758

Հ Յ Ե Տ Ա Յ Ա Խ Ա  
Հ Յ Ե Տ Ա Յ Ա Խ Ա

Ի նկատի ունենալով այն տարտամ դրժւթիւնը, որ տիրում է կաթողիկոսական թեկնածուների հարցում, որ համարեա ոչ ոք սիրտ չի անում բաց ճակատով որ և է թեկնածուի անուն տալ, որ արժանաւոր և բարձրաստիճան անձաւորութիւնները ենթարկում են անձնական կրքուշահերի շահատակութեանը, հրատարակում ենք պ. Խուզանի այս յօդւածը առանձին քրօշիւրով, որպէսզի ամեն ոք քիչ շատ կարողանայ իրազեկ լինել կաթողիկոսական թեկնածուներից գոնէ մէկի մասին և շատերի մթագնած աչքերից ընկնի այդ քօղը, որ անձնական հաշիւների պատճառով քաշել են սա կամ նա:

Այս յօդւածը հրատարակուել է «Սուրհանդակ» թերթում Մատթէոս վարդապետի Մշակում տպուած յերիւրանքների դէմ, Կարապետ եպիսկոպոսի մասին:



ԳԵՐԵՅԻ ԱԿԱԴԵՄԻԱ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՎՃԵԿԻ

ՀԱՅԱՏԱՆԻ ՎՃԵԿԻ

ՀԱՅԱՎԵՐ

I.

«Մշակի» սոյն տարւայ № 8-ում «Մի բացաւորութիւն» վերնագիրը կրող խմբագրական ծանուցման մէջ մեղ հետ անշուշտ շատերը կարդացին, որ էջմիածնի սինողի անդամ բրձ. Մատթէոս վարդապետը կարապետ եպիսկոպոսի գէմ գրած մի յօդուած է ուղարկել նոյն թերթին և հիւրընկալութիւն խնդրել, որովհետև մարդը ձըշմարտութիւն է ասելու: Իր «Ճշմարտութիւններն» անպատճառ հիւրընկալել տալու համար վարդապետն ի միջի այլոց գրած է եղել. «Ես հաւատում եմ, որ ինչպէս մինչև այժմ «Մշակի» էջերը ինձ համար բաց են եղել և այսքան երկար տարիների ընթացքում ես թոյլ չեմ տուել սուտ, միտում աւոր յօդուածներ զրել, այնպէս էլ այս անգամ ես հրապարակ եմ գալիս միայն եւ միայն ճշմարտութիւն ասելու». (ընդգծումը մերըն է):—Եւ խմբագրութիւնը, որ կարապետ եպիսկոպոսի գեռ գեկտեմբերի 27-ին ուղղած նամակը

Չ. ՄԱՏՎԱԾԱ  
ԿԵՐԵՅԻ ԱԿԱԴԵՄԻԱ

չէր տպել, «չկամենալով բորբոքել մի հարց, որ միանգամայն անպատճ և անօդուտ տեղն արծարծութեց» (տես «Մշակ» № 8), զգացուած Մատթէոս վարդապետի այս սրտառուչ կոմպլիմենտից, «Մշակի» № 12-ում տպագրութեան է յանձնել «ճշմարտութիւններ» ասող այդ յօդուածը, թէև «Մշակը» կարապետ եպիսկոպոսի գէմ և նրա հրաժարականի շուրջը յարուցուած խնդրի վերաբերմամբ միանգամայն վայելուչ դիրք էր բռնել, անշուշտ քաջ իմանալով՝ թէ այդ ամբողջ զալմաղան ու հարայ-հրոցը որտեղից է դալիս, ուր է զնում և ինչպիսի նենգամիտ մեքենայութիւնների արդիւնք է՝ ցանկալի նպատակի համար յամար: «Մշակը» տպագրել է, ասում ենք, այդ յօդուածը, թէև նրա խմբագրութիւնը վարդապետի աղերսախան տողերն ու «ես թոյլ չեմ տուել սուտ, միտում աւոր՝ յօդուածներ զրել» խօսքերը կարդալով այնքան հոտառութիւն պէտք է ունենար, որ զիսի ընկնէր, թէ, այդտեղ մի «ե», այն էլ շատ մեծ «ե» կայ, որ հայր յօդուածագիրը խորամանկութեամբ խմբագրութեան վստահութիւնը իր կողմը զրաւելով շահագործելուէ նրա թերթի էջերը և «սուտ» ու ուղղակի «միտումաւոր» տողեր զրելու:

Ցիրաւի, Երբ աւելի քաշշուել ու ոտնատակ է տրուել ճշմարտութեան սուրբ դադափարը, քան այսպիսի գէպքերում, երբ մարդկանց խօսեցնողն իրօք կիրքը, չկամութիւնը, թշնամանքն ու սըրտներում ամբարած տարիների ատելութեան թոյնն

է եղել: Սակայն ծուռ ճանապարհով ճշմարտութեան մօտենալ ցանկացողները, նրանց թուռում և Մատթէոս վարդապետը, միշտ պիտի յիշեն անմահ բանաստեղծի խօսքերը. «վայ նրան, որ մեղքով է մօտենում ճշմարտութեան, ճշմարտութիւնն երբէք չի խնդայ նրան» (Եիլեր).

## II

Կարճատե հիւանդութիւնից յետոյ՝ հանգեաւ ի Տէր Վեհափառ Կաթողիկոսը: Անբուժելի ախտով տառապող Օծեալ հիւանդի ընական մարդ նենգամիտ ուղիներին յետ չկանգնեցրեց դիւային խաղեր յօրինելու ճիշտ այն ժամին, երբ Վեհափառ ննջեցաեալին իսկապէս յարգողները երկիւզած պատկառանքով զլուխ պէտք է խոնարհեցնէին նրա բաց դագաղի ու գերեզմանի, թարմ շիրիմի ու օրհնեալյիշտատակի առաջ, Տիրոջից նրա համար քաղցր դատաստան հայցելով միայն: Սրա փոխարէն, սակայն, օծեալ գին խաւար ամբոխը նորից գրգռելուա ուարկայ դարձրին: Դու հիւանդութեան ժամանակ «հորիգոնն» մի լուր տափեց, ըստ որի՝ Կարապետ եկիպկոպոսն էր դուրս գալիս Վեհի հիւանդութեան պատճառ. ու երբ մահը վրայ հասաւ, այդ նոյն թերթը իր գլխաւոր ուժերի բերանով նոյն եպիկոպոսին պարզապէս «հայրապետասպան» դուրս բերեց՝ հիմնուելով այն լուրերի, զրոյցների և պառաւական ասէ-կոսէների վրայ, որ հաւաքուել էին Երեկանի:

ւանի փողոցներում և որ միշտ էլ առաջ են գալիս ամեն մի բարձրաստիճան անձի շուրջը. չէ որ ժողովուրդը սովոր է միշտ իր յախուռըն երևակայութեամբ խորհրդաւոր մշուշով պատելու նմանօրինակ ամեն մի դէպր:—Խօսուեցաւ ու զըրուեցաւ, որ Վեհը՝ եպիսկոպոսի հետ ունեցած խօսակցութիւնից անմիջապէս յետոյ է իր ցաւելոն զգացել ու հիւանդութիւնն ստացել, ապա՝ թէ հրաժարականի ընթերցման անմիջական ազգեցութեան տակ նկարագրուեցաւ յուղիչ ու արագիք տեսարան—բնորոշ խօսակցութիւններով և այն և այն և այս ամբողջի ուշագրաւ ֆինալը՝ Կարապետ եպիսկոպոսը իր կոպիտ խօսքերով սրտապատառ է արել «Երկաթէ պատրիարքին»: Եւ այդ մարդկանց ոգեւորութիւնն այն աստիճանի էր հասել, արած գիւտի պատճառած հոգեկան զմայլանքն այնպէս վերացրել էր նրանց և միենոյն ժամանակ այնպէս մթնագնել բորբոքուած ուղեղները, որ մի ըոպէ չէին մտածում ու հաշիւտալիս իրենց, թէ այս թնչ են անում, յարգելի բարձր անձնաւորութեանն ինչպէս իջեցնում, պղտիկացնում ու մի չնչին բան են դարձնում: Հին դարերից մեզ ժառանգութիւն հասած արևելեան ամենատիպիք բոնակալի՝ սուլթան Արդիւլ-Համբէդի դէմ ճակատ առ ճակատ կոռուզ արի պատրիարքը, իր ազգի դարաւոր տառապանքը զըրկած, կամիր գազանի դէմ ժառացած անվեհեր ոգին, այդ իսկ պատճառով իր հօտից «Երկաթէ պատ-

բիարք» պատուանուն սուայած, տաճկական արհաւերքների և խժղութիւնների բովանդակ սարսափը կրած, 200 հազարի արիւնը իր աչքով տեսած ու այդ բոլորին դիմացած քաջ հովիւր, չի դիմացել իր սառապըեալ եպիսկոպոսի «կոշտ» խօսքերին և սրտաճաք է եղել...

Մտածել ու մտածում են գէթ մի բոպէ այս զաւեշտի հերոս հեղինակները, որ դրանով ամենամեծ անարդանքըն են հասցնում հանգուցեալ Հայրապետի նաև պատրիարքական ամբողջ անցեալին: Եթէ մտածած լինէին, անշուշտ Վեհի թաղման առթիւ էջմիածին հաւաքուած պատգամաւորների առաջ էլ չէին դնի այս «իմնզրի» քըննութիւնը, իսկ զրուելուց յետոյ էլ խոհեմութեամբ վերցնել կըտային: Բայց ի՞նչ ենք տեսնում, մի քանի ժամ շարունակ ծեծուում է խնդիրը, քաշքըցուում են մամուլի զանազան օրգաններ, Կարապետ եպիսկոպոսը և ուրիշները, կարդացուում է չարաբաստիկ հրաժարականը. պարզուում է, որ եպիսկոպոս խօսակցութիւն է ունեցել Վեհի հետ նոյեմբերի 19-ին և հրաժարական տուել 21-ին. Վեհը կատարեալ տոռղ 28-ին եկեղեցի է իջել իսկ 29-ին հիւանդացել: Մի խումբ բժիշկներ այդ հիւանդութիւնը եպիսկոպոսի հետ ունեցած միշնադէպի արդիւնք համարելը բժշկական տեսակէտից անտեղութիւն, ոմանք էլ աբսուրդ են անուանել: Ժողովում բժիշկ Արծրունին շատ որոշակի այդ անտեղութիւնը մատնանշել է: Եւ հետեւալ օրը

ժողովը իր եղբակացութիւնն է հանել. վիշտ յայտնել Տէր Տեղակալին Կարապետ եպիսկոպոսի կիրառած մի քանի անպատշաճ դարձուածքների համար, վիշտ յայտնել նաև ամբողջ միաբանութեան բռնած ընթացքի համար: Հայրապետասպանութեան մեղադրանքն այդպիսով վշտի է փոխարկուում... Ի՞նչպէս մենք էլ մեր վիշտը, այն էլ դառն ու խորին վիշտը չյայտնենք հրէշաւոր մեղադրանքի հեղինակներին և այդ մեղադրանը վշտի փոխարկողներին:

Եւ եթէ այս ամենին աւելացնենք նաև զոքտոր Պազիկի յայտնազործութիւնները, պատկերը կատարեալ կլինի: «Մշշակի» № 13-ում Պոլսի «Փամանակ» թերթից քաղած՝ առաջ է բերւած այդ բժշկի յօպուածի կարեոր մասերը: Բանից գուրս է դալիս, որ հանգուցեալ Հայրապետին զերեղման տանող հիւանդութիւնը վաղուց բուն դրած է եղել նրա մէջ և «անբութելի» ճանաչուած: Յարգելի բժիշկը յանդիմանութիւն է կարդում թիւրքիայի պատգամաւորներին, որ այդ կարեոր հանգամանքը հրապարակ չեն հանել ընտրութիւններից առաջ: Սակայն եթէ ոչ ոք չի իմացել կամ իմացել և «քաջութիւն» չի ունեցել այդ խընդիրը հրապարակելու, չէ՞ որ ինքը հանգուցեալը շատ լաւ է իմացել իր արատը. Ի՞նչ էր նա անելու. Ի՞նչ արաւ երջանկայիշատակ Վարժապետեանը: Զենք ծածկում, բժիշկ Պազիկի այդ յայտնազործութիւնները մեր մէջ շատ տխուր խոհեր են ծնեցնում:

Այս բոլորից յետոյ և սրանց դիմաց այլիս  
ինչ ունիք ասելու, Կարապետ եպիսկոպոսի դէմ  
ամսուր ամբաստանութիւն յօրինող հոգևորական  
և աշխարհական պարոններ. դէմ այժմ պիտի  
դգմնիք ձեր արածի ամբողջ վատութիւնը:—Դառ-  
նանք այժմ Մատթէոս վարդապետի յօդուածին:

### III

«Մշակի» չորս ամբողջական սիւնեակներում  
փուել է Մատթէոս վարդապետն իր ներհուն մաքի  
գոհար «Ճշմարնութիւնները», «անբարիխաղնութիւն».  
համարելով լսելը Կարապետ եպիսկոպոսի և նրա  
հրաժարականի մասին, «մանաւանդ որ,—ասում  
է սուրբ հայրը լրագրական վէճերը մի տեսակ  
կուսակցական բնաւորութիւնն ստանալով, բուն  
խնդիրը, նրա էութիւնն ու արթէքը յետ են մըդ-  
ուում: Եւ նա չի լսել ու տպագրութեան է յանձ-  
նել մի այնպիսի զազիր յօդուած, որի նմանը  
վերջին տարիներս հայ մամուլի մէջ չի երևացել  
և որի ընթերցումից ամեն մի բարեկիրթ մարդ  
սարսուռ կզգայ անշուշտ: Երբ խնդիրը յիրաւի  
կուսակցական բնաւորութիւն է ստացել», կարո՞ղ  
էր արդեօք լուռ մնալ այն Մատթէոս վարդապե-  
տը, որ Կարապետ եպիսկոպոսի անունն առանց  
սոսկումի ու ջղաձգութեան չի լսել և որ իր կրօ-  
նաւորական կեանքի ընթացքում ամենաշնչին  
առիթն անպամ բաց չի թողել վատարանելու,

վարկարեկելու նրան տարապարտուց: Այն վար-  
դապետը, որ գեռ տարիներ առաջ կատաղի ար-  
շաւանը էր սկսել Կարապետ սրբազնի դէմ ու  
նրա մէջ «միկրոսկոպով անգամ բարեխղճութիւն  
չէր գտնում», կարո՞ղ է ներկայ դէպքում անաչառ  
լինել նրա վերաբերմամբ և «միայն ու միայն  
ճշմարտութիւն ասել»:—Բիւֆօնի խօսքերը, թէ  
«ոճը ինքը մարդն է» ճշմարիտ են, այն, հայր  
Մատթէոս, և դուք ձեր այդ յօդուածով ծառանում  
էք մեր սուաջ ձեր բովանդակութեամբ, ձեր սկ  
հոգու կատարեալ ամբողջութեամբ:

Վայէլ է արդեօք մի վարդապետի այնպիսի  
լեզու բանեցնելու նոյն իսկ մի սոսկ անձի նկատ-  
մամբ, որպիսին գուք էք բանեցրել մի արժանա-  
ւոր եպիսկոպոսի վերաբերմամբ, որի նմանները  
հայ մարտիրոս եկեղեցին հեշտութեամբ չէ ծնում:  
Եթէ գուք, ընթերցող, չփառէք թէ ինչ բառեր  
է բաց թողել հայր սուրբն իր յօդուածին բնարան  
դրած առակի միջից, նեղութիւն բաշեցէք սուրբ  
գիրք բանալու և ձեր սուաջ կըպատկերանայ Քրիս-  
տոսի աշակերտն իր բոլոր տգեղութեամբ ու կը-  
համոզուիք, թէ գործ ունիք մի այնպիսի փոքրոզի  
վանական տիպի հետ, որ պատշաճի և վայելչու-  
թեան սահման չի ճանաչում և չի խնայում. ոչ  
միայն իրենից ամբողջ հասակով, պաշտօնով ու  
աստիճանով բարձր սրբազնագործ պաշտօնեայի,  
այլև ընթերցողի բարոյական զգացութեերը:

Ամեն անգամ երբ Կարապետ եպիսկոպոսի

դէմ այս մարդու յօդուածներն ենք կարդացել,  
ձիշտ է, միշտ էլ Կրիլովի յայտնի վկի և քոթոթի  
առակն ենք յիշել բայց այս անգամուանն ուղղակի  
չափից գուրս է՝ իր փոքրիկ անձը հրապարակի  
վրայ զնելու և իր մասին խօսել տալու համար  
ոչ մի բանի առաջ կանգ չէ առնուած:—Բայց ան-  
ցնենք և տեսնենք թէ ի՞նչ է ասում էջմիածնի  
միաբանութեան այդ «Պալաքեան վարդապետր»:

Պատմելով Կարապետ եպիսկոպոսի հրաժա-  
րականի ա. պարբերութեան բովանդակութիւնը,  
վարդապետն ասում է որ սրբազնն «ծածկել է»  
ճշմարտութիւնը և «ստեր ասել»: Բարի:—Կարա-  
պետ եպիսկոպոսի չարաբաստիկ խօսակցութիւնը  
հանգուցեալ Հայրապետի հետ է եղել. առանց  
որեւէ մէկի ներկայութեան: Վեհից կրած վիրա-  
ւորանքի շարժառիթը բացատրելու համար՝ նա  
գրել է իր հրաժարականում այդ խօսակցութեան՝  
դրան վերաբերեալ մասը. Մատթէոս վարդապե-  
տը այլ կերպ է ներկայացնում այդ պատմութիւնը:  
Միւս կողմից Կարապետ եպիսկոպոսի «Հովտում»  
տուած բացատրութիւները նորից հաստատում են  
հրաժարականի պատմածը: Արդ՝ մէջ տեղը «առւտ»  
ասողն ով է. Կարապետ եպիսկոպոսը, թէ Մատ-  
թէոս վարդապետը: Վերջինս այդ խօսակցութեան  
մանրամասնութիւնները որտեղից կարող էր ի-  
մանալ. կարելի՞ բան է ենթագրել, թէ հանգու-  
ցեալ կաթողիկոսը կանչել է Մատթէոս վարդա-  
պետին և նրան մէկիկ-մէկիկ պատմել իրենց մէջ

տեղի ունեցած խօսակցութեան բոլոր կէտերը. հա-  
մոզւած ենք՝ ոչ եւ որովհետեւ այդ խօսակցութիւնն  
իր ամբողջ մանրամասնութեամբ մենք լսել ենք  
Կարապետ եպիսկոպոսին շատմօտգտնուող անձան-  
ցից, որոնց նա պատմել է վեհի մօտից ելնելոց ան-  
միջապէս յետոյ, այսինքն այն ժամանակ, երբ այդ  
մասին հրապարակի վրայ ոչինչ չկար ու ենթա-  
գրել իսկ չէր կարելի, թէ այդ ձեռվ հրապարակ  
կգայ և ուրեմն եպիսկոպոսը դիտարեալ կեր-  
պով իր մտերիմներին ճշմարտութիւնն այլ կերպ  
չէր ներկայացնի, և որովհետեւ մեր լսածը միան-  
գամայն նոյն է, ինչ որ ասուած է հրաժարականի  
և «Հովտի» մէջ, ապա պէտք է հետեւցնել,  
«ստեր» ասողը հէնց ինքը Մատթէոս վարդապե-  
տըն է:

Որովհեակ, եթէ Կարապետ եպիսկոպոսը յան-  
դգնած լինէր և վեհի հետ ունեցած իր խօսակցու-  
թիւնը կեղծած ու սուտ ձեռվ նրան ներկայացրած,  
ապա նա կը կանչէր Կարապետ եպիսկոպոսին և  
կասէր. «Եպիսկոպոս, ես ձեզ ստախօս անուանեցի,  
դուք վիրաւորուեցաք, ելաք գնացիք ու այս հրա-  
ժարականը բերիք ինձ. որ գուք յիրաւի ստախօս  
էք, ահա Զեզ՝ այս մէկ սուտ, այս երկուս, այս  
երեք և այլն» ու մէկիկ մէկիկ նրա առաջ կը-  
դնէր ստախօսութեան բազմաթիւ օրինակները և  
կը կարկամեցնէր նրան. կարո՞ղ կլինէր ծպտուն  
անգամ հանել եպիսկոպոսը, երբ նա իր ստախօ-

սութեան փաստերը զբով արձանացրած մեհի  
ձեռքը տուած լինէր: Ամենկեն: Եւ որովհետեւ վեհն  
այդ չի արել, ընդհանակառակն, նրա ցանկութիւնն  
է եղել հրաժարականը յետ տալ ու նրան կրկին  
Պարսկաստան ճամբել, նշանակում է հպիսկոպոսն  
էլ ոչ մի սուտ բան չի գրել հրաժարականում: Միէր արամաբանութիւնն ու մտածողութիւնն այս  
է թելազրում մեզ:—Բայց քանի որ Մատթէոս  
վարդապետը ամենայն համարձակութեամբ հրա-  
պարակով, վստահօրէն, առանց քաշուելու, ստա-  
խոս է անուանում Կարապետ եպիսկոպոսին, նշա-  
նակում է այս, ճիշտ են այն լուրերը, թէ Վեհի և  
հպիսկոպոսի խօսակցութեան ժամանակ մէկը  
դուն տակը մտած՝ լսելիս է եղել նրանց և այդ  
մէկը հէնց ինքը Մատթէոս վարդապետն է:—Հա-  
ճեցէր տրեմն, հայր Մատթէոս խօսակցանել հրա-  
պարակով, որ գուք դուն տակից լսել էք ամբողջ  
խօսակցութիւնը, պոռացէք, որ հարազատ ճշմար-  
տութիւնը ձեր գրածն է, գուցէ այդ կըհաստա-  
տէք փաստերով ևս, այն ժամանակ հաւասացած  
եղէք, որ առաջինը մէնք կըլինենք Կարապետ ե-  
պիսկոպոսի ճակատին ստախոս պատուանունը ան-  
ջնջելի կերպովզրոշմողն ու նրան անարգանքի  
սիւնին գամողը. այլապէս, ինչժւ ձեզ պետք է  
հաւատալ և ոչ Կարապետ սրբազնին, որ իր  
խօսակցութիւնը գրի առած՝ խօսակցին է տուել:  
Բայց որ, ընթերցող, ստախօսութեան բարեմաս-  
նութեամբ օժտուածը հէնց ինքը Մատթէոս վար-

դապետն է և ոչ Կարապետ եպիսկոպոսը ահա-  
ւասիկ ձեզ ապացոյցը:

#### IV

Իր յօդւածի Ամատուածը Մատթէոս վարդա-  
պետն այսպէս է սկսել. «Կարապետ եպիսկոպոսն  
իր հրաժարապի մէջ սուտ է խօսում. նա ասում  
է, որ կաթողիկոսը անբարեհամ է եղել միշտ դէպի  
ինքը. սուտ է»: (Ընդգծումներն իրենն են): Ապա  
իր այս թեզն ապացուցանելու համար յիշում է  
այն փաստը, որ Վեհն իր խրախոյսն ու գոհունա-  
կութիւնն է ուղարկել սրբազնին, նրա թեմում  
շրջագայելու առթիւ: Լաւ: Կարապետ սրբազնի  
հրաժարականը տպուած՝ հրապարակի վրայ է,  
փոփոխութեան ենթարկել այն, բառ աւելացնել  
կամ յապաւել՝ անհնարին է: Արդ՝ ինդրում եմ  
Զեղ, աշխարհի երեսին գտնուող և հայերէն կարդալ  
իմացող պարոններ, ցնյց տուէք մեզ այն  
տողը, որտեղ Կարապետ եպիսկոպոսը ասած  
լինի թէ կաթողիկոսը միշտ անբարեհամ է եղել  
դէպի ինքը. մենք որոնեցինք, որոնեցինք և ըր-  
գոտանք: Հաճեցէք գուք ցոյց տալ, հայր Մատթէոս  
վարդապետ և ապացուցել, որ ստախոս չէք:  
—«Հովա՞»-ի մէջ Կարապետ սրբազնն ինքը (Ճեր  
յօդուածից առաջ) խօսակցանում է, որ առաջ Վեհն  
շատ բարեհամ է եղել դէպի ինքը: Մեզ, մեղ հետ  
շատ շատերին էլ յայտնի է այդ փաստը: Մինք,

օրինակ, ամենաստոյգ աղքարից տեղեկութիւն ունենք, որ Վեհի յոյսը Կարապետ, Գարեգին, Յուսիկ և այլ վարդապետներն են եղել այդ մարդիկն են, ասել է նա, որ Էջմիածնում գործ են կատարում ու պիտի կատարեն. բայց յետո՞յ... «Նենդաւոր բարձրասանքներն ու չարախօսութիւնները» իրենց գերի մէջ են մտել, երկաթի տակ կը լիս կատառել և երկաթը ծռել. Զեր, հայր Մատթէոս, «թէն շատ էլ արևովը չէր խընդում, բանի որ վերջը լս (մենք ենք գծում) համոզուել էր նրա ինչ լինելու մասին» խօսքերը գալիս են լիովին հաստատելու սրբազնի ակնարկները. ինքներդ ապացուցնում էր «քամբասանքների» և «չարախօսութիւնների» գոյութիւնը: «Խորամանկ աղուէսն, հայր սուրբ, ջուխտ ոտով թակարդ կընկնի»:

Այս էր ահա հրաժարականի ա. «սուտն» ըստ Մատթէոս վարդապետի: Սրանից զատ նար. և գ. «ստեր» է առաջ բերում: Թէ բ. «ստի» վերաբերմամբ նվ է արդարացին կամ անիրաւը՝ Կարապետ եպիսկոպոսը թէ Մատթէոս վարդապետը, ասել չենք կարող: Անշուշտ Կարապետ սրբազնն ինքը Մատթէոս վարդապետի այս յօդուածն անպատճախան չի թունի. այն ժամանակ մենք բոլորս վերահասու կլինինք այդ խնդրին— «Հրաժարագրի մի երրորդ սուտն էլ այն է, գործ է Մատթէոս վարդապետը որ իբր թէ ինքը (Կարապետ եպիսկոպոսը) վերջին գէպքից վիաւորուած է հրաժարուում Ատրպատականի առաջնորդութիւն

նից»: Որ Կարապետ եպիսկոպոսը մի բանի անգամ ցանկացել է հրաժարուել այդ թեմից, այդինքն ևս խոստովանուում է հէնց հրաժարականի մէջ: Բայց և այնպէս նա Վեհին հնազանդելով ու «իր թեմ վերադառնալու կարևորութիւնն զգալով» յօդարել է ու զնալու ցանկութիւն յայտնել որոշ պայմանաժամով: Բայց միթէ պարզ չէ ձեզ համար, հայր սուրբ, որ ոչ մի պատուազգաց մարդ այլպիսի գէպքից յետոյ այլևս բնաւ երթէր չէր յօդարի թեմ վերադառնալ. ինչպիսի անպատիւ մարդ պէտք է լինի մէկը, որ իր իշխանաւորից «ստախօս» մակդիրն ստանայ, նրա կատարեալ անվստահութիւնն ու անբարեհաճութիւնը տեսնի և այնուամենայնիւ շարունակի նրա փոխանորդը հանդիսանալ և այն որ պատիւ ունեցող հողածինն է, որ ճիշտ այնպէս չէր վարուի, ինչպէս արել է Կարապետ եպիսկոպոսն, այսինքն չէր հրաժարուի: Ինչու այս պարագան «սուտ» է համարուում, միթէ դուք ինքներդ այդպէս չէիք անի:—Եւ եթէ ճիշտ են այն խօսքերը, հայր Մատթէոս, որ դուք ասել էք Վեհին Կարապետ եպիսկոպոսի ձեռնադրութեան առթիւ, ապա դուք եթէ մազաչափ անգամ բարեխզգութիւն ունենայիք ներկայ խնդրում ամենախն ծպտուն չպիտի հանէիք: Վանական անհաշտ թշնամին իր ոխերիմի, որի արիւնը խմելու պատրաստ է նա, դատաւորը լինել չի կարող: Բայց ձեր այս խօսքերից մեզ համար շատ բան է պարզուում: «Կարապետ վարդապետի վրայ գործ կայ

3158

սինօդում, ի՞նչ պատիւ կըբերի ձեւնադրողին և  
ձենագրուոդին, եթէ վաղը նա դատուի իբրև ե-  
պիսկոպոս բառերը ամեննեին չեն սազում սինոդի  
անդամ Մատթէոս վարդապետի բերանում։

Ի՞նչն է ձեղ այստեղ խօսեցնողը. եպիսկո-  
պոսական աստիճանի պատուի, թէ՞ Մայր Աթոռի  
շահի նախանձախնդրութիւնը. Ոչ մէկը և ոչ  
միւսը. Եթէ դուք, գոնէ իբրև հոգեորական,  
ամենափոքր չափով անգամ ակնածէիք եկեղե-  
ցական այդ աստիճանից, ապա ձեղ ամե-  
նին թոյլ չէիք տալ այնպիսի անպատշաճ ոճով  
խօսելու մի մարդու մասին, որ այն աստիճանն  
ունի և հէնց այն Հայրապետից է ստացել, որի  
անկոչ պաշտպանն ու յիշատակ յարգողն էք ձեւ-  
նում։ Աւելի ծիծաղելի կըլինէր ենթադրել, թէ  
ձեղ այդ տողերը թելազրողը Մայր Աթոռի շահի  
պաշտպանութեան գիտակցութիւնն է եղել։ Այն  
վարդապետը, որ գող արքեպիսկոպոսի գաղած  
տամնեալ հազարների գործը ծածկողներից ու  
նրան անընամիր հոչակողներից մէկն է հանդիսացել  
էջմածնի սինոդում, որ իր անձի համար անպատ-  
ուութիւն չի համարում աթոսակցելու նրան և  
նրա հետ մէկ տեղ հանդիսա խղճով վճիռներ  
կայացնելու, բարոյական և ոչ մի իբաւունք չունի  
այստեղ պատուի խընդիր յարուցանելու։ Հետեւա-  
բար խնդրի աստօնը բոլորովին այլ բան է։—  
Էջմածնի ներկայ միաբանութեան մէջ այն որ  
վանականն է, որ իր անձի վսկեմութեամբ, աղպին

ու եկեղեցուն մատուցած բազմադիմի ծառայու-  
թիւններով, իր կոչմանն ու պաշտօնին ամենայն  
անձնութիւններութեամբ և հաւատարմութեամբ սովասա-  
ւարելու համար ամենից շատ և ամենից շուտ  
իբաւունք կարող էր ունենալ եպիսկոպոսական  
սրբազն աստիճանին ակնկալելու, եթէ ոչ ձեզնից  
բազմից ցեխոտուուծ Կարապետ վարդապետն ու  
այժմ եպիսկոպոսը. և այն որ կաթողիկոսը պէտք  
է լինէր, որ էջմածնի միաբանութեան մէջ,  
ինքնարեբաբար ու առանց թելագրանքի, իր ձևոքը  
ամենից տռաջ չը պիտի գնէր այն արժանաւոր  
զլիսի վրայ, որի կըողը Կարապետ անունն ունէր  
և ունի. Վեհափառ կաթողիկոսի տռաջ ձեղ, հայր  
Մատթէոս, համարձակութիւն տռողն ու յանդգն ու-  
թիւն սերշնչողը բոլորովին այլ հիմունք ունի. և  
ահա թէ ինչ.՝ Դուք շատ լաւ գիտէք որ վերջին  
կաթողիկոսական ընտրութիւնների ժամանակ Կա-  
րապետ վարդապետի անունը շատ շատեն էին  
տալիս, այն էլ գիտէք, որ պետական օրէնքը չէր  
թոյլ տալիս վարդապետներին թեկնածուների  
ցանկի մէջ դնելու։ Արդ՝ եթէ գեռ վարդապետ  
Կարապետի անունը մէջ տեղ էր գալիս, որչափ  
տւելի շուտ հրապարակ կըգար եպիսկոպոս Կա-  
րապետի անունը. և գնւք որ ասրիներից ի վեր  
թունալից ատելութիւն էք տածում դէպի ձեղ  
համար միանգամայն անհասանելի այդ բարձր  
անձնաւորութիւնը, որ գեռ Ալէքսանդրապոլի  
յաջորդ ժամանակ շատ յաճախ բոլորովին անտեղի

կեղտեր էք շպրտել այդ մարդու հասցէին, թնականն է, ոչ մի կերպ չէիք կարող հանդուրժել, որ ձեզ համար ատելի այդ անձնաւորութիւնը եպիսկոպոսանար... Ահա մաքրակրօն հայր սուրբ, այստեղ, միայն «այստեղ է թագուած շան գլուխը»:

V

Հակառակ Մատթէոս վարդապետի բոլոր ճիգերին, սակայն Կարապետ վարդապետը եպիսկոպոս է ձեռնադրուած և որ գլխաւորն է չնայելով հրէշային լուրեր տարածուեցան աշխարհի ամեն կողմ գանազան վարդացիներով, նա Կարապետ եպիսկոպոսը, լուրջ թեկնածու է համարուում կաթողիկոսական գանձի համար: Բայց Մատթէոս վարդապետը չի վհատում, և ահա նա, նոր ողի առած, գրիչը թաթախած իր ատելութեան թոյնի մէջ, մի առանձին չարամտութեամբ շարագրել է իր յօդուածի IV, V և VI հատուածները և Կարապետ եպիսկոպոսի «քննական կենսագրութեանն» է հրացրել լնթեցողներին, որի իւրաքանչիւր տողի տակից Մատթէոս վարդապետի փոքրիկ անձն է երեան գալիս իր անմաքուր հաշիւների դաւթարը ձեռքին (էջմածնում Մատթէոս վարդապետը յայտնի է իրեւ «պամֆլէտաչի»): —Կարապետ եպիսկոպոսն իր մասնագիտական կրթութեամբ էջմիածնին օգտակար է եղել հազիւ 2 թուանշանի արժողութեամբ, —ասում է հայր

սուրբը, նա անվարչական՝ վարչական պաշտօնների է ձգտել ու ձգտում՝ «որքան կարելի է մեծ, ամսորժելի պատասխ տիրանալու». սոները թաւրիգում՝ զլուխը Ռուսաստան է եղել՝ աչըք տնկած Ռուսահայ թեմերի վրայ «շատ և կանոնաւոր սոճիկ ստանալու» համար եջմիածնից դուրս գնալ է աշխատել այն ժամանակի, «երբ ներսի գրամական հաշիւների հետ կապ ունեցող պաշտօնները ուրիշների ձեռքումն են եղել կամ էջմիածնում հաց չի եղել», «նպաստներ» է ստացել Խրիմեանից և այն և այն, մի խօսքով կատարեալ մի բախտախնդիր: Եւ այս ամենը Կարապետ եպիսկոպոսի մասին գրողը մի հայ վարդապետ է, էջմիածնի միաբան, սինոդի անդամ: Մարդ՝ Աստուած և խիղճ մոռացած պէտք է լինի, ամօթը մէկ կողմ կրած, ծայրայեղ յանդգնութեամբ գոտեպնդուած և բարեխոգնութեան ու ազնուութեան վերջին մնացորդներին էլ ընդմիշտ մնաք բարով ասած, որ Կարողանայ էջմիածնի ներկայ միաբանաւթեան ամենից համարելի, ամենից պատրաստուած, ամենից գործունեայ, շիտակ և ամենից արգասաւոր մի անդամի հասցէին այդքան կեղտ, այդքան մուր շպըրտելու:

Մաթէոս վարդապետը Կարապետ եպիսկոպոսի իր մասնագիտութեամբ էջմիածնին տուած օգուտին դժուարութեամբ 2 թւանշան է զնում, և այդ անում է այն մարդը, որ այդ կողմից Կարապետ եպիսկոպոսի կօշիկների թելերն անգամ ար-

ձակելու արժանի չէ։ Եթէ Կարապետ եպիսկոպոսը՝ իր զերմենակրէն տշխատութիւններից դուրս այլես մատը մատին խփած չըլինէր էջմիածնուռ բաւական էր, որ հէնց գրանց համար միայն ամեն մի միաբան նրան հանդիպելիս իր վեղարը վերցնէր, խորը գլուխ տար ու անցնէր և իրեն համար մեծ պատիւ համարէր նրան միաբանակից լինելու համար, իսկ գրանցից ամենից յարգանքով՝ ինքը Մատթէոս վարդապետը։ — Հող ու մոխիր գլխներիդ Հառնակ և Հեռմանն, որ շարունակ պարծենում էր արևելեան ամենահին եկեղեցու սպասաւորների մէջ մի արժանաւոր գիտնականաշակերտ ունիք. վայ ձեզ, որ յարգանքով ու պատկառանքով էք յիշում ձեր աշակերտի անունը նրա գովական աշխատութիւնից օգտւելու ժամանակ ձեր դասախոսութիւնների համար, վայ և ձեզ բոլոր գիտնական քննադատներ Կարապետ եպիսկոպոսի «Պօղիկեանք» գրքի, որ բառ չէր գտնում ձեր հիացմունքի չափն արտայայտող. Ի՞նչ մարդիկ էք ո՞վ էք դուք. եկէք, էջմիածնն, համեցէք, առ ոսս Մատթէոս վարդապապետի և ուսարուք ի նմանէ. այ մարդը, այ գիտնական պատրաստութեան տէր անձը. հայոց եկեղեցու մասին ճգրիտ տեղեկութիւններ ահա սրա գիտութիւնից ջամբեցէք .. Հապա Կարապետ եպիսկոպոսի հայերէն աշխատութիւնները, հապա նրա հայոց եկեղեցու քննական պատմութիւնը (որի նմանը դեռ չկայ հայոց գրականութեան մէջ

մասն I.), նրա բազմաթիւ ուսումնասիրութիւններն հրատարակութիւնները, «Արարատի» խմբագրապետութիւնը, տեսչութիւնը, ուսուցչութիւնը.... — Ամեն անգամ, երբ ներքին և արտաքին թշնամիներն ահեղ թափով յարձակուում են էջմիածնի ու նրա միաբանութեան վրայ, ասացէք խնդրեմ, ով էր, որ զօրեղ գրչով պաշտպան էր կանգնում իր մայրենի եկեղեցուն և ցոյց տալիս, որ էջմիածնի միաբանութեան մէջ մարդիկ կան։ Երբ վեհետակի միաբանութիւնը իր գլխաւոր ուժերը, ապա և իր «մատեան գունդը» հանից ասպարէզ հայ առաքելական եկեղեցին աղանդաւոր յայտարարելու, ով էր որ սարի նման կանգնեց «Արարատի» Մասիսին բարեբար և հպարտ ու հուժկու ձայնով սաստեց. «Յետ կանգնեցէք, մեռած չենք պատկառեցէք էջմիածնի միաբանութիւնից»... և հողմը լոեց։ Ո՞ւր էին այն ժամանակ հայր Մատթէոսները. այս մարդու տուած օգտին էք հազիւ հազ 2 նշանակում, այդպէս էք երախտահատոյց լինում հայոց եկեղեցու հզօր ախոյեանին և ձեր բոլորիդ երեսը մերայնոց և օտարների առաջ պարզ անողին. ապերմիտ մարդիկ։ Վերջապէս երբ պետք է զադարի «արեղայական հալածանքը» հայոց եկեղեցու սպասաւորների մէջ։

## VI

Ահա այդ մարդու՝ Կարապետ եպիսկոպոսի՝ տուած օգուտին է, որ Մատթէոս վարդապետը դըժ-

ուարութեամբ 2 նշանակելով կցում է, թէ նա,  
Կարապետ եպիսկոպոսը, վարչական պաշտօնների  
յետեից է ընկած, թէ վարչագէտ չէ, «որքան  
կարելի է մեծ, ախորժելի պատառի տիրանալու  
շատ և կանոնաւոր ոռճիկ ստանալու»...

Երբ Կարապետ եպիսկոպոսն էջմիածնի  
ներսն էր և իր պաշտօններով ճեմարանինետ կապ-  
ուած՝ հայ մամուլի մի մասը, գուցէ նաև Մատ-  
թէոս վարդապետը ահազին վայնասուն էր բարձ-  
րացրել, որ «աստուածաբան» վարդապետները էջ-  
միածին «փափուկ» պաշտօնների կրթնած՝ չեն  
մտածում ժողովրդի մասին և ժողովրդի մէջ չեն  
դուրս գալիս: Մինչև անգամ հայ բանաստեղծնե-  
րից մէկն այդ հանգամանքը նիւթ դարձրեց իր  
զրչին. նախանձելով աստաւածաբանների վիճակին՝  
Պառնասի զաւակը փափագյայտնեց աստուածաբան  
լինելու. Մայր-Աթոռում փափուկ պաշտօն ստա-  
նալու համար: —Եւ էջմիածնիկ անդրանիկ աստուա-  
ծաբան Կարապետ եպիսկոպոսը ելաւ էջմիածնից  
ու ժողովրդի մէջ մտաւ: Երկանի հայրապետական  
թեմի փոխ թեմակալի պաշտօնն էր վարում նա:  
Վրայ հասան հայ-թրքական արհաւերքները: Կա-  
րապետ եպիսկոպոսը (այն ժամանակ վարդապետ)  
սրի բերանին ու գնդակների տարափի տակ էր  
կանգնած. նրա ձայնը կրակի միջից էր դալիս.  
անձնագոհութեան այնպիսի հոյակապ օրինակ ցոյց  
տուեց նա, որ նրան առաջ հայհոյող բերաններն  
անգամ գովասանքի փոխուեցան: Ժողովուրդը սի-

րեց իր անձնուրաց հովուին, բազմաստորագիր  
համախօսականներով — պատգամաւորութիւններ  
գնացին էջմիածին՝ եպիսկոպոսացներու արժա-  
նաւոր վարդապետին. սակայն նրա «մազերը  
սպիտակած չէին», ուստի և ժողովը ինդիրը  
մերժուեցաւ:

Այսուհետև Կարապետ վարդապետը Ատըր-  
պատկանի առաջնորդ ընտրուեցաւ այն ժամանակ,  
երբ կուսակցական թշնամանքը լեռնացած կանգ-  
նած էր նրա առաջ և երբ նրան ևս «թքակոլոլ»  
անել էին ցանկանում: Կարճ միջոցում թաւրիզում  
նա այնպիսի համակրութիւն ձեռք բերեց հայ,  
պարսիկ և ուսւ ըլցաններում, «Մշակը» այնպիսի  
գովասանական յօդուածներ տպեց նրա մասին,  
որպիսիների շատ քիչ ընտիր առաջնորդներ են  
արժանացել: Կարապետ եպիսկոպոսի հրաժարա-  
կանի լուրն առնելուն պէս էլ՝ պատգամաւորական  
ժողովը շտապեց նախ հեռագրով, ապա գրաւոր  
թղթով հայցել Վեհափառ-Կաթղիկոսին՝ չընդունել  
հրաժարականն ու սրբազնին իրենց ուղարկել:  
—Եւ այսպէս, Կարապետ եպիսկոպոսը երկու թե-  
մում է եղել. ամեն տեղ էլ սիրուել ու յարգուել.  
ամեն տեղ էլ նա ժողովրդի բարօրութեան համար  
գլուխը յետ զըրած է եղել: Այսօր, սակայն վեր  
է կացել Մատթէոս վարդապետը և ասում, —Կա-  
րապետը վարչական չէ, նա դրսում պաշտօն չպի-  
տի վարի: Միթէ ձեր աշխարհում, հայր սուրբ  
սիրուում և գնահատուում են անվարչական, ան-

գործունեայ և անպէտք առաջնորդները, ո՞րտեղ է ձեր լրջմտութիւնը: Վերջապէս մը կըրակն ընկնի այդ կարապեա եպիսկոպոսը՝ իր օձիքը ձեզ նմաններից ազատելու համար. էջմիածնում մնայ, թէ ժողովրդի մէջ. ում լսի նա. ձեզ, թէ ժողովրդի ու մամուլի ձայնին:

Արդ՝ վերոգրեալ այդ բոլորը գիտենալուց յետոյ, լոնչպէս էք դուք ձեզ թոյլ տալիս գրելու, որ կարապետ եպիսկոպոսը Թաւրիզի վրայ նայել է միայն եպիսկոպոսանալու նպատակով: Էջմիածնի մը վարդապետը, իր մը արժանիքների համար նրանից շուտ կըճեռնադրուէր. Ո՞ր ձեռքն է, որ կըզանար ամենից առաջ հէնց նրա գլխին դըրուելու: Այս մէկ: Միւս կողմից այս էլ իմացէք, հայր Մատթէոս, որ յիրաւի, թէև շատ «մարդկանց» իրենց պաշտօնն ու ստացած կոչումն է մարդ դարձնում, լինին նրանք վեղարտոր թէ անվեղար և կամ մունդիրաւոր, այդ միենոյն է, բայց և կան սակաւաթիւ այնպիսիները, որոնք բազմութեան միջից բարձրանում—ծառանում են մեր առաջ իրենց ներքին-մտաւոր-բարոյական նկարագրի և արժանիքների շնորհիւ: Վերցըէք դուք, օրինակ, կարապետ եպիսկոպոսի վրայից նրա եպիսկոպոսական աստիճանը, առէք նաև նրա վեղարն ու վերաբկուն, նաև կըմնայ այնուամենայնիւ հրապարակում կանգնած իրեն մի մարդ, որ իր ամբողջ գլխով բարձր կերևայ ոչ միայն բոլոր հոգեորականերից, այլև հայ մտաւոր ասպարէզ-

ներին տիրացած շատ աշխարհական առաջնորդներից: Իսկ հապա վորձեցէք վայր դնել ձեր պաշտօնը և հանել ձեր վերաբկուն ու վեղարը և մըտնել հասարակութեան մէջ. ի՞նչ գին կունենաք դուք. ձեզ այն ժամանակ, հայր Մատթէոս, գդուար թէ «միկրոսկոպով անգամ գտնել կարելի լինիր:

## VII

Դառնում ենք Մատթէս վարդապետի ամենից վրդովեցուցիչ ու զաղիր, միենոյն ժամանակ մարդ վարկաբեկելու և ամար այնքան ձեռնոտու պարագաներին՝ կարապետ եպիսկոպոսին շահախնդրութեան մէջ մեղադրող կէտերին, որոնց հետ ընթերցողն արդէն ծանօթ է մեր յօդուածի ծ-լրդ հատուածից: Նախորդ հատուածում ցոյց տուինք, որ տարիներ առաջ հայ մամուլն էր մեղադրում կարապետ վարդապետին, որ նա էջմիածնում «փափոկ պաշտօններ է վարում և ժողովրդի մէջ չէ գնում» Այժմ Տէր Մատթէոսն է մեղադրում, որ ժողովրդի մէջ է գնում «ախորժելի, պաշտօնների տիրանալու», «շատ և կանոնաւոր ոռծիկ ստանալու» համար: Այս ի՞նչ հանելուկի է: Հանելուկի լուծումը մեր կարձ խելքով այս է. ամեն պաշտօնի մէջ էլ կարապետ եպիսկոպոսը պիտանի է եղել և ահագին գործ կատարել. փոքրոդի հակառակորդներն այդ տանել չեն կարող. չէ որ աշխատասէր, զործունեայ, ժողովրդասէր մարդու կողքին—նման բա-

րեմատնութիւններից գուրկ մարդկանց առյօկա-  
լութիւնն առանձնապէս աչք կըծակի: Ի՞նչ պէտք  
է անել: Կարապետ եպիսկոպոսին դասալիք կամ  
կարգալիք անել, կամ իրենց միջից գուրս քշել  
չեն կարող. միակ զէնքը մնում է անուանարկելն  
ու վարկաբեկելը. եթէ նպատակներին չհասնեն,  
գոնէ իրենց մասին խօսել կըտան. «տեսէք քոթոթն  
այնքան քաջ է...» մի հին ծանօթ և ընդունուած  
զէնք հայկական սև, անշնորհակալ իրականու-  
թեան մէջ: Եւ հայր Մատթէոսը այս փորձուած  
զէնքին է դիմել:

Հստ նրա՝ Կարապետ եպիսկոպոսը էջմիած-  
նից գուրս գալ է աշխատել այն ժամանակ, «Երբ  
ներսի գրամական հաշիւների հետ կապ ունեցող  
պաշտօնները ուրիշների ձեռքումն են եղել կամ  
էջմիածնում հաց չի եղել»: Բարի. քննենք այս  
«մատթէոսեան ճշշմարտութիւնը»: Մի րոպէ ըն-  
դունենք, որ այս թեզը զուտ ճշմարտութիւն է:  
Այն ժամանակ սակայն մենք լիովին իրաւունք  
ունենք այդ թեզի կողքին և այս անտիթեզը դնե-  
լու. «Երբ ներսի զրամական հաշիւների հետ կապ  
ունեցող պաշտօնները իր (Կարապետ եպիսկոպոսի)  
ձեռքում են եղել կամ էջմիածնում հաց է եղել,  
նա (Կարապետ եպիսկոպոսն) ներմն է մնացել և  
սինթեղ՝ «ուրեմն Կարապետ եպիսկոպոսը այդ  
ժամանակ «մեծ, ախորժելի պատառների է տիրա-  
ցել և շատ, կանոնաւոր ոոճիկ ստացել»:  
Արդ՝ տեսնենք, որոնք են ներսի իւղալի իպաշտօն-

ները և ի՞նչ «մեծ, կանոնաւոր ոոճիկ» է ստացել  
սրբազնը: «Ներսի գրամական հաշիւների հետ  
կապ ունեցող պաշտօնները» սինօդի, ճեմարանի  
«Արարատի», տպարանի, վանական կառավարու-  
թեան և ագարակի պաշտօններն են: Առաջին և  
վերջին հաստատութիւնների պաշտօնների հետ  
Կարապետ եպիսկոպոսը ոչ մի առընչութիւն չի  
ունեցել. կապ չի ունեցել նաև տպարանի հետ.  
շատ կարճ ժամանակով վանական կառավարու-  
թեան սոսկ անդամ է եղել միայն. իսկ ճեմարանի  
և «Արտրատի» հետ նա, յիրաւ, երկար ժամանակ  
գործ է ունեցել. հետևաբար Մատթէոս վարդապետի  
ակնարկը ճեմարանի և «Արարատի» հետ կապ  
ունեցող պաշտօններին է վերաբերում: Լաւ: Տես-  
նենք հիմա ի՞նչ պաշտօններ է վարելնա: 94 թուից  
պ. Կարապետ Կոստանեանի տեսչութեան օրով  
Կարապետ եպիսկոպոսը ճեմարանի տեսչի օգնա-  
կան և ուսուցիչ է եղել ամբողջ 5 տարի. յետոյ  
3 տարի տեսուչ և ուսուցիչ. Կոստանեանի բ.  
տեսչութեան ժամանակ ուսուցիչ 1 տարի և Գա-  
րեգին վարդապետի տեսչութեան օրով դարձեալ  
ուսուցիչ 1 տարի, այսինքն 5 տարի տեսչի օգնա-  
կան է եղել, 3 տարի տեսուչ և 10 տարի էլ  
ուսուցիչ: Ինչ «Արարատի»-ն է վերաբերում,  
տպա նա (Կարապետ եպիսկոպոսը) պ. Ն. Քարա-  
մեանի խմբագրապետութեան օրով այդ թերթի  
գլխաւոր և ամենաբեղուն աշխատակիցն է եղել,  
յետոյ դարձել խմբագրապետ, կրելով թերթի

ամբողջ ծանրութիւնը գրեթէ միայն իր ուսերի վրայ: Իսկ ի՞նչ է ստացել նա այդ կարևոր և բազմաթիւ պաշտօննարի համար:—Ճեմարանի տեսչի ոռճիկը 2 հազար 400-ից երբէք պակաս չէ եղել (առանց դասերի): օգնականի ոռճիկը անշուշտ դրա կէսը պէտք է հաշուել. իսկ ուսուցիչի դասագինը լսարաններում 75-ական: Կարապետ եպիսկոպոսի ունեցած դասերի թիւը (մեծ մասամբ լսարաններում) շուրջ 12—18—20 է եղել, տեսչութեան ժամանակ հարկաւ քիչ: Արդ՝ հաճեցէք խնդրեմ հաշուել թէ այդ 10 տարուայ ընթացքում ի՞նչ կարող էր ստանալ Կարապետ եպիսկոպոսը իր այդ պաշտօնների համար և իրօր ի՞նչ և սացել: Առաջին 5 տարին, երբ եղել է տեսչի օդիսական, ուսուցիչ, «Արարատի գլխաւոր աշխատակից և միաբան վարդապետ, Կարապետ եպիսկոպոսը ստացել է տարեկան ոչ աւելի ու ոչ պակաս, քան միմիայն 300 ըստըլի արծաթ դրամ վարձատրութիւն, այսինքն ճիշտ այնքան, որքան ստանում էր էջմիածնում ամեն մի «Ղուկաս վարդապետ», թէ կուզ այդպիսիները ու ոչ մի պաշտօն չըկատարէին ու նոյն իսկ ժամ չընային լրկ աղօթելու համար: Իսկ տեսչութեան ժամանակ՝ այդ պաշտօնի և ուսուցչութեան համար ստացել է 7 թէ 8 հարիւր. վերջին երկու տարին արած ուսուցչութեան համար՝ կէս դասագին. իսկ «Արարատի» աշխատակցութեան ու խմբագրապետութեան համար՝ ու ոչ մի կոպէկ:

Ահա ձեզ, ընթերցող կարապետ եպիսկոպոսի ստացած «շատ կանոնաւոր ոռճիկները» և այն «մեծ, ախորժելի պատառները», որոնց նա տիրացել է այն ժամանակ, երբ «ներսի գրամական հաշիւների հետ կապ ունեցող պաշտօնները» իր ձեռքին են եղել: Միաժամանակ մի քանի պատասխանառու պաշտօն վարել և 5 տարի շարունակ, 300 (երբէ հարիւր) ըուրըլի ստանալ—իրաւ որ չաղ ոռճիկ է մի համալսարանական մարզու համար... Եւ եթէ հոգելոյս Խրիմեան կաթողիկոսը այդ ծայրայեղ անարդար վարձատրութիւնը տեսնելով՝ երբեմն նըպաստներ է տուել—կորած տեղ է տուել. և միթէ դատապարտութեան արժանիէ, երբ մի ուրիշը նրա արած աշխատանքի համապատասխան ստանալիքի  $\frac{1}{4}$  մասն անգամ՝ չի անի, մինչ նարկայումն էջմիած. ամեն մի պաշտօն վարձատրում է կանոնաւորապէս և հազարների տէր միաբանները յաճախ հարիւրներով նըպաստներ են ստանում բժշկութեան գնալու պատրուակով...

Այստեղ մենք մեր խօսքը կտրում ենք, գեռասելիքներս չաւարտած ասանց այն էլ մեր յօգուածը շատ երկարեց: Սակայն այդքանն էլ բաւական էր ցոյց տալու ընթերցողին, թէ Մատթէոս վարդապետի «ճշմարտութիւններն» ի՞նչ գին կարող են ունենալ իրազեկ մարդկանց համար և թէ նրա յօգուածի ամբողջ աստան ի՞նչ է եղել ու ի՞նչու հէնց այժմ՝ նա իր թունաւոր սլաքներն այդ արմաւոր հակառակորդի գէմն է ուղղել:

Իսկ դժուք, զերապատիւ Կարապետ Եպիսկոպոս, վրդովուելու բան չունիք Զեր «միաբանակցի» յօդուածից. «ոճը՝ ինքը մարդն է»... Յարձակումներ Զեր անձի դէմնոր չեն, չեն էլ դադարի, «պտղատու ծառին փէտ քցող շատ կըլինի» առածը հայ ժողովուրդն, իր դարաւոր փորձի իմաստութիւնից է հանել: Անհնդ կացէք սրբազն.

«Գլխովը շատ ամպեր կանցնեն,  
Սարը միշտ կայ անմահ»: Այսաւանդ:

ՊԵ

Պ

ՊԵ

Պ



ՄՄ Հայոցիտական գրադարան



MAL027607

ՊԵՆԵՐԻ ՌԵՎԱԽ

ՊԵՆԵՐԻ ՌԵՎԱԽ

ՊԵՆԵՐԻ ՌԵՎԱԽ

ՊԵՆԵՐԻ ՌԵՎԱԽ